դրանց մի մասը գանձելու իրավունք ստանում[13]*: Դիվանի, ինչպես նաև խասսի, հողերի վարձակալության այս ձևը կոչվում էր «իջարե», կամ «զաբթ», որ նշանակում է «գանձել» կամ «վերցնել»*[14]*: Զաբթով տրվում էին նաև տարբեր օբյեկտներից ստացվող այլ հարկերի գանձման իրավունքները:*

Զաբթի պայմանագրերը ամեն տարի վերանորոգվում էին և որոշվում վարձակալության գումարը: Այսպես, օրինակ, «Վրաստանի Թանգարանի» ձեռագրատան մի վավերագրից իմանում ենք, որ 1710 թ. Ղարադաղի Քալեյբարի շրջանից գանձվող ոչխարների հարկը (չոբանբեկի) 559900 դինարով գտնվել է յուզբաշի Մուհամմադ-Ալի բեկ Կարադաղլուի զաբթում[15]*: Հաճախ պետական պաշտոնյաներն ու զինվորականները հանձնարարություններ (բարաթ կամ հավալե) էին ստանում իրենց ռոճիկները կանխիկ դրամով ստանալու հիշյալ զաբիթներից, ի հաշիվ նրանց վարձակալական գումարների (վջուհաթ-ե զաբթի)*[16]*:*

Պաշտոնական վավերագրերում և պատմական սկզբնաղբյուրներում պետական պաշտոնեության և զինվորականության վճարվող ռոճիկների վերաբերյալ գործածված է նաև «թանխահ» տերմինը: Այս բառը ժամանակակից պարսկերենում նշանակում է «դրամ», «կանխիկ գումար»: Սովորաբար այս տերմինն օգտագործվում է «մավաջիբ» (ռոճիկ) տերմինի հետ «թանխահ—ե մավաջիբ» ձևով, որ թարգմանվում է «ռոճիկի թանխահ»: Եթե «թանխահը» մենք հասկանալու լինենք իր ժամանակակից իմաստով, ապա «թանխահ-ե մավաջիբ»-ը պետք է թարգմանենք «ռոճիկի գումար»:

Մենք կարծում ենք, որ այս տերմինը չի կարելի համեսալեին համանիշ տերմին համարել[17]*: Մի քանի ֆերմանների և առանձին սկզբնաղբյուրների*[18] *ուսումնասիրությունը մեզ բերում է այն եզրակացության, որ ռոճիկների դիմաց ստացվող թանխահը ռոճիկների հատուցման այն ձևն էր, երբ պաշտոնյաները ամեն տարի դիմում էին դիվանին և տվյալ տարվա, երբեմն նաև մի քանի ամսվա ռոճիկի դիմաց ստանում այս կամ այն հարկատու օբյեկտի համայնքին կամ այդ օբյեկտներից ստացվող հարկերի վարձակալին ուղղված հանձնարարություններ և բնամթերքով կամ կանխիկ դրամով իրենց ռոճիկները ստանում նրանցից*[19]*: Իսքանդար Մունշու վերը մեջ բերված խոսքերից միանգամայն պարզ երևում է, որ համեսալեների ֆերմաններում հատկապես պետք է շեշտվեր «համեսալե» (ամենամյա) բառը, որպեսզի «զինվորները ազատվեն դավթար կամ դիվան գնալ-գալուց և անձամբ ստացվող ռոճիկ (թանխահ-ե մավաջիբ) կամ օրապահիկ (մարսումաթ) պահանջելուց»: Այդ նշանակում է, որ ովքեր թիուլ կամ համեսալե չունեին, ուղղակի կապված էին*

---

[13] *Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 220, 234, 235, թղթ. 1գ, վավ. 248:* Զաքարիա Ագուլեցի *էջ 63, 68, 69, 70, 80, 94, 134, 150:*

[14] *Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 234, 235, թղթ. 1գ, վավ. 248:*

[15] *Տե՛ս* მაკარ ხუბუა, *էջ 58:*

[16] *Տե՛ս նույն տեղը, էջ, 8, 23, 3 , 34, 44, 56:*

[17] *Տե՛ս* И. П. Петрушевский, Очерки.., *էջ 197:*

[18] *Տե՛ս Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1ա, վավ. 49, թղթ. 4, վավ. 30, հմմտ.* سلسلة النسب صفويه، برلين، ۱۹۲۴ *էջ 109—110:*

[19] *Տե՛ս* მაკარ ხუბუა, *էջ 22, 24, 28, 46, 74:*